**Արձանագրություն N 2**

**ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-26/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝հայտերի բացման և գնահատման նիստի**

Հայտերի բացումը տեղի է ունեցել 25.03.2026թ.-ին, որին ներկա էին՝

***Հանձնաժողովի Անդամներ***

**Ա. Մարտիրոսյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետի պարտականությունները կատարող.

**Հ. Ղազարյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

**Ս. Մուշեղյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

**Կ. Սիրունյան** – ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի տնտեսվար:

***Գնումները համակարգող***

**Գ. Սիմոնյան՝** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի մասնագետ.

**Բացակայում էին՝**

***Հանձնաժողովի նախագահ***

**Վ. Պողոսյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ

1. **Տեղեկություններ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից ներկայացված հիմնավորումների վերաբերյալ**

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

## 2. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 16:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

## 3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-26/2 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ | ք. Երևան, Շերամի փ. 111 շ. 51բն. |

## 4. Մասնակցի առաջարկած գինը

1. «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գինը:

| Հ/հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 1,272,230 | - | 1,272,230 |

## 5. Հանձնաժողովի կայացրած որոշումները

**Հանձնաժողովը որոշեց.**

-կասեցնել նիստը և հայտերի գնահատումն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում,

- նիստը վերսկսել 26.03.2026թ. ժամը 12:30-ին:

26.12.2025թ. ժամը 12:30-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին չէր մասնակցում գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Մարտիրոսյանը շարունակվեց կասեցված նիստի աշխատանքները:

**Հանձնաժողովն արձանագրեց, որ.**

- «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հետևյալ անհամապատասխանությունը՝

N1 հավելվածում ներկայացված է՝ «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ-ի 2023թ. իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, այն դեպքում, երբ.

- քննարկվող ընթացակարգի հրավերի /N1 հավելվածում նշված ծանութագրություն/ համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը.

-Օրենքի 60.3 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն / պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնող մարմին ՀՀ արդարադատության նախարարությունում գործող գրասենյակ / ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ

2) փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

***Հանձնաժողովը որոշեց.***

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հնարավորություն տալով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /27.03.2026թ. ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունը,

- նիստը վերսկսել 30.03.2026թ. ժամը 11:30-ին:

30.03.2026թ. ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները՝ շարունակեց կասեցված նիստի աշխատանքները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ-ն սահմանված կարգով շտկել է արձանագրված անհամապատասխանությունները և որոշեց ընթացակարգի

հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ-ին, որի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն կկնքվի պայմանագիր:

***Հանձնաժողովը որոշեց.***

- «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

- Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Քուլինգ Հիթինգ» ՍՊԸ-ին:

## 1. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաղթող մասնակցի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

**Հանձնաժողովի նախագահ** _____ **Վ. Պողոսյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** _____ **Ա. Մարտիրոսյան**

_____ **Հ. Ղազարյան**

_____ **Ս. Մուշեղյան**

_____ **Կ. Սիրունյան**

**Գնումները համակարգող՝**

_____ **Գ. Սիմոնյան**